ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ 327

19 օգոստոսի 2022 թվականի N -Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ «ԿԱՊԱՆԻ N 1 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԹԻՎ 4 ՄԱՍՆԱՇԵՆՔԻ ՍԱՆՀԱՆԳՈՒՅՑՆԵՐԻ ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԵՎ ՋՐԱՀԵՌԱՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԸ ՍԵՂՄ ԺԱՄԿԵՏՈՒՄ ՎԵՐԱԿԱՌՈՒՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, 13-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով և հիմք ընդունելով «Կապանի N 1 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Լ. Զաքարյանի 2022 թվականի հուլիսի 15-ի գրությունը՝

որոշում եմ

1. Հանձնարարել «Կապանի N 1 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Լ. Զաքարյանին՝ սեղմ ժամկետում կազմակերպել նշված դպրոցի թիվ 4 մասնաշենքի սանհանգույցների ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի վերակառուցման աշխատանքների իրականացումը՝ հաշվի առնելով խնդրի կարևորությունը և անհետաձգելիությունը՝ կապված նոր ուսումնական տարվա մեկնարկի հետ:

2. Հանձնարարել ՀՀ Սյունիքի մարզպետի աշխատակազմի Ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչությանը՝ կատարել սույն որոշումից բխող Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված գործառույթները և արդյունքների վերաբերյալ ներկայացնել տեղեկատվություն:

19.08.2022

X

ՌՈԲԵՐՏ ՂՈՒԿԱՍՅԱՆ

Подписано: GHUKASYAN ROBERT 5371280029

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ **Ռ. ՂՈՒԿԱՍՅԱՆ**

2022թ. օգոստոսի 19